

եպիսկոպոսի նամակին մէջ կը յիշատակուին ասորիներու եւ եզրիտի քիւրդերու անունները:

Այդ կը նշանակէ, որ բանակցութիւններ տեղի ունեցած են զանազան տարրերուն հետ, միանալու թրքական լուծը թօթափելու համար, ու միայն Եզրիտի քիւրդերն ու ասորիները համաձայնած են, մինչդեռ Կուրմանճ քիւրդերը, որոնք մեծամասնութիւնն են եւ քրդական կէս անկախ իշխանապետութիւնը իրենց ձեռքին մէջն է, չեն համաձայնած:

Աւելի հեռուն կրնանք երթալ, մտածելու որ 18-րդ դարու կէսերուն, թրքական լուծը թօթափելը, քրդական իշխանապետութեան լուծէն ազատուիլ կը նշանակէր միեւնոյն ժամանակ: Եզրիտները, որ փոքրաթիւ էին Տաճկահայաստանի մէջ, Ղըզլըբաշները եւ Ասորիները աւելի կը հալածուէին թրքական կառավարութեան կողմէ եւ անոնց հակումը հայերու ապստամբութեան բնական էր: Բայց քրդական իշխանապետութիւնները, մտահոգ իրենց տեղական անկախութեամբ, այդ ատենները, թէեւ յաճախ կռուի մէջ էին թրքական ուժերուն հետ, բայց իրենց զրացի իշխանապետներուն միանալու, հայերն ու ասորիներն իրենց հետ առած՝ թուրքերը Հայաստանէն եւ քիւրդիստանէն դուրս հանելու հիմնական մըտածումը չունեցան: Ընդհակառակը, այդ թուականներուն ցեղապետները օսմանեան կառավարութեան ձեռքին մէջ զօրաւոր ճնշող ուժ մը կը հանդիսանային: Այնպէս որ երբ Յովսէփի էմին կ'առաջարկէր Վրաստանի իշխանին քալել քրդական Բայազիտի վրայ, այդ կը նշանակէր ոչ միայն տեղացիները ազատել թրքական բանակի տիրապետութենէն, այլ նաեւ ազատել քրդական աւատապետի կամայականութիւններէն:

Ինչպէս կը տեսնենք, 18րդ դարու (1763-

1767) այս փորձն ալ կը նմանի 15-րդ դարու զինակցութեան, բայց շատ փոքր ու շատ անոյժ: Վրաստանը իր վերջին օրերը կ'ապրէր, հայերը քրիստոնեայ պետութեան միջամտութեան վրայ դրած էին իրենց յոյսը, եւ կամքն ու ազատագրական կորովը չունէին իրենց սեփական ուժին դիմելու: Քրդերու մեծ մասը կը մնար անտարբեր (կամ կը պահպանէր իր իշխանութիւնը հայերու վրայ): Միայն եզրիտներն ու ասորիները իրենց պատրաստակամութիւնը կը յայտնէին: Այսպիսով թէեւ կը կազմուէր, վրաց, հայոց, քիւրդերու եւ ասորիներու միացեալ շարժում մը, բայց, իր անուժութեան հետեւանքով՝ կը մնար դատարկ խօսակցութիւն:

Ուրեմն, 16-րդ դարէն մինչեւ 19-րդ դարու սկիզբը հայերն ու քիւրդերը, մտնելով օսմանեան լծի տակ, այդ երեք երկար դարերու ընթացքին թուրքերու դէմ հաւաքական ճակատ մը չկազմեցին. ազատագրական խնդիրը ընդհանուրի մտահոգութիւնը չդարձաւ: Ադրբային անկախ պետութեան դադարաւորը հեռու մնաց միջնադարեան աւատապետութեան այդ օրերու տիրապետողներէն. եւ քիւրդերու ու հայերու այդ անդորձ երկար շրջանէն օգտուեցաւ թուրք պետութիւնը: Ան հետզհետէ հասունցուց շարք մը խնդիրներ, եւ Արեւմուտքէն իր աջը դարձուց դէպի Արեւելք:

19-րդ դարու առաջին կէսի շարժումները այլապէս ճակատագրական նշանակութիւն ունեցան թէ՛ քիւրդերու եւ թէ՛ հայերու համար: Երեք հարիւր տարուան պատմութիւնը կը փակուէր շատ անսպասելի կերպով, քրդական կէս անկախութիւնը կը ճգմուէր (1847ին), ու հայ-քրդական յարաբերութիւնները կը մտնէին բոլորովին նոր փուլի մը մէջ, որուն կ'անդրադառնանք յաջորդ յօդուածով: